

Ցեխերու մէջ կը պլռշկին,
 Եւ ծերերու կոկորդներէն պինդ բռնած՝
 Գանկերն անոնց պատերուն դէմ կը ջարդեն.
 Կը բանան մեր մայրերուն
 Ծոցերը սուրբ՝ որոնցմէ
 Կը թափին դուրս եղբայրներ դեռ անանուն,
 Յայեր առանց դեռ ձեւի.
 Կը տըրորեն, կը փըշրեն
 Գարշապարի, բիրի, պայտի տակ կողեր,
 Գանկե՛ր, գանկե՛ր, անթիւ գանկեր, լեցնելով
 Սայաատակի ճեղքըւածքները բոլոր
 Ողնածուծով, ըղէղով...
 “Յառա՛ջ, յառա՛ջ”:
 Ո՛վ բարբարոս դու Ոգի,
 Անցքիդ վըրայ, ձայներն ոսկրի փըշրումին
 Մինչեւ երկնի խոր անձաններն հըրեղէն
 Կը հընչըւին... Անցքիդ վրայ կը խեղդե՛ն
 Երեխաներն իրենց մօր սեւ ծամերով,
 Ու մեր հարսերն յարաշխատ,
 Վաւաշ կըրթով մ’ընդգըճած,
 Ջըրհորներու պարաններով կը սպաննեն.
 Եւ կը գոհեն ո՛վ գիտէ ի՛նչ չար դեւի
 Տաճարներու ցուրտ սիւներուն փաթտըւած՝
 Սուրբ կուսաններն հերարձակ.
 Իսկ արտերուն, ա՛խ, արտերուն մէջ չըքնաղ
 Ուր Յայուն կեանքն արե՛ւ կ’ըմպէ եւ արեւն
 Յոգիին մէջ կը մեռնի՝
 Վաստակաբեկ դիակներով կը կանգնեն
 Գողգոթանե՛ր, Գողգոթանե՛ր սըրբազան,
 Եւ բոլորն ալ, լի գա՛նկ մ’իրենց ձեռքին մէջ՝
 Միահամուռ կը խըմեն